# ԿՐԵՄԼԸ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՂԱՐԿԵՑ ԼՂԻՄ

ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի յանձնարարութեամբ Օգոստոսի 28ին ԼՂԻՄ մեկնեցին ԽՍՀՄ Գխ պատգամաւոր Օ. Օստրուխովը, Դաշնակցային Ռուսաստանի պատգամաւորներ՝ Ա. Շաբադը, Վ. Շէյնիսը, Բ. Եուշչենկովը, որոնց հետ մէկտեղ Արցախ են մեկնել ԽՍՀՄ ՊԱԿի, ՆԳՆի եւ Պաշտպանութեան նախարարութեան չորս գեներալներ։ Պատուիրակութիւնը լինելու է նաեւ Շահումեանի շրջանում։

Վերադարձից յետոյ պատրաստուած հաշուետուութիւնը ներկայացուելու է ԽՍՀՄ Գերագոյն խորհրդին, որն էլ Արցախի վերաբերեալ որոշում է ընդունելու։